

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ
ՆԻՍՏ ԺԸ
7 ՄԱՐՏ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1879

ՏԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ Կ. Ս. ՊԱՐՈՆԵԱՆ. Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 Գուճ-Դաբու, Պատրիարքարանի փողոց 11

ԴԻԻԱՆԻ ԱՁԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Ա. Բեհապէր
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Ա. Ա. Բեհապէր
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Չեռնոսուքեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Հովհաննէս Քահանա Մկրեան
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

Գաւառիապետի դիւան

Մերվիլէն էֆէնտի Ա. Բեհապէր
Աւթէն էֆէնտի Պէրպէրեան
Գասպար էֆէնտի Չէրազ

Կալուածոց դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Արիկ էֆէնտի Ունճեան Ա. Բեհապէր

Համարակալութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Ա. Բեհապէր
Համարձու էֆէնտի Մազպուլեան

Երմտական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Յարաբերութեան դիւան

Մկրտիչ էֆէնտի Կասեան Ա. Բեհապէր
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Խրատարութեան դիւան

Ներսէս վարդապետ Ասլանեան
Առաքել էֆէնտի Աթուհ-Տիւրքի Ա. Բեհապէր
Նշան էֆէնտի Օտեան

Նախաձեռնութեան դիւան

Տօրթոս Ռափաէլեան էֆէնտի
Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի Ա. Բեհապէր
Միհրան էֆէնտի Չօպանեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Իւթիւճեան Ա. Բեհապէր
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համարձու էֆէնտի Ալաճաճեան

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ ԺԸ.

7 ՄԱՐՏ 1880

ՆԱԽԱԴԱՀ. — Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

ԱՁԴԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վ. Իճակ

- 1 Կարապետ Եպ. Սերոբեան Բ
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ
- 3 Սիմօն Եպ. Սէֆէրեան Բ
- 4 Կարապետ Ք. Սէթեան

Բ. Վ. Իճակ

- 5 Մտթէոս Եպ. Իզմիրեան
- 6 Պօղոս Վ. Խօլոսմեան
- 7 Յովհաննէս Ք. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ

Գ. Վ. Իճակ

- 9 Վահան Վ. Տ. Մինասեան
- 10 Յակոբ » Ա. Փափազեան Բ
- 11 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ
- 12 Խորէն » Փէշիվանեան Բ

Դ. Վ. Իճակ

- 13 Ներսէս Վ. Ասլանեան Բ
- 14 Սուքիաս Ք. Ստեփանեան
- 15 Յարութիւն Սերոբեան (վիւճ.)
- 16 Վրթանէս » Պալեան Բ

Ե. Վ. Իճակ

- 17 Խորէն Արք. Նար Պէյ Բ
- 18 Յովհաննէս Վ. Փափազեան
- 19 Գարեգին » Թաթարեան Բ
- 20

- Բ Բաղակալութիւն առաջին :
- Բ Բաղակալութիւն երկրորդ :
- Բ Բաղակալ ընտանք պատճառ :

ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

(Ա. Վ. Իճակ)

Գումգաբու, Կետիկ փաշա
Եւ Գումգաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ
- 22 Գէորգ Ստիմարաճեան Բ
- 23 Խաչիկ Մանկասարեան Բ
- 24 Կարապետ Աղաբաճեան Բ
- 25 Համարձու Մազպուլեան
- 26 Մինաս Գափամաճեան
- 27 Յովհաննէս Պոյաճեան Բ
- 28 Ն. Մէզպուրեան Տօրթոս
- 29 Պօղոս Պառնասեան Բ
- 30 Սարգիս Աղաբէկեան Բ
- 31 Սահակ Ապրօ Բ
- 32 Սենեքերիմ Մանուկեան Բ
- 33 Բարթոլ Քիւրքճիպաշեան Բ
- 34 Ատովմ Տէրոյէնց Բ
- 35 Գէորգ Աղապուլաճեան Բ
- 36 Յ. Մէրեէմ-Գուլի
- 37 Աւետիս Կիրտաղեան Բ

(Բ. Վ. Իճակ)

Պէշիկլար

- 38 Անդրանիկ Կրճիկեան Բ
- 39 Ալիքսան Խօրատեճեան Բ
- 40 Բարսեղ Հալաճեան Բ
- 41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան Բ
- 42 Սեպուհ Մազպուլեան Բ
- 43 Մարուգէ Յրէնկեան Բ
- 44 Պօղոս Լնքսէրճեան

Ի Կետիկ փաշա Ս. Խաչ

- 45 Սիմօն Յէլէկեան Բ
- 46 Ստեփան Ասլանեան Բ

47 Յ. Նիւմանեան Տօրթոս Բ

48 Իսկիւտար Ս. Կարապետ

49 Միհր Պահճէղափուլեան Բ

50 Պօղոս Թորգոմեան Բ

51 Նիկողոս Ալաճաճեան Բ

52 Տրդատ Փափազեան

(Գ. Վ. Իճակ) :

Գասպար Բաշա

53 Գասպար Չէրազ Բ

Բերա

54 Արիկ Ունճեան

55 Գրիգոր Սէլիմէճեան Բ

56 Գրիգոր Օտեան Բ

57 Սէրվիլէն Բ

58 Ռափաէլեան Տօրթոս Բ

59 Միքայէլ Մօմճեան Բ

60 Կարապետ Քաղաղեան Բ

61

62

Միջագիւղ

63 Յակոբ Նորատուկեան Բ

64 Տիգրան Եուսուֆեան

65 Մկրտիչ Գազանճեան Բ

66 Աւետիս Գօլթեան Բ

67 Նշան Օտեան

Պէլգօզ Եւ Ղալաքիա

68 Միքայէլ Մամիկոնեան

(Դ. Վ. Իճակ)

Ղուգղունճուգ Եւ Իճակի

69 Յովհաննէս Կասեան Բ

70 Ստեփան Պէշիկճեան Բ

Գատըգիւղ	ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետեան Բ11	Կարին	121 Ստիան փառապետեան
72 Մկրտիչ Մուրադեան Բ10		Տիվրիկ
Նարյըգաբու	101 Սիմոն Մադուստեան Բ11	122 Նշան Գարազաշ Բ
73 Յակոբ Եփէմէնիսեան Բ	Քեօքանես	Զեյրուն Եւ Մարաշ
Եփեմիանայիկ Սամարիոյ	102 Մ. փառապետեան Տօրթօր Բ 2	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 6	Անդրիանոսապօլիս	Տրապիզօն
Թօփգափու	103 Պիլէն Ապաուլլահ Բ 2	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ11
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	104 Կ. Ս. Իւթիւսեան Բ	125 Մեքօն Իսկէնտէրեան Բ12
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Աւետիս Պարոնեան	126 Միհրան Զօպանեան Բ
Գուրուչեյմէ	Ղարափաար	Վան
77 Ասափա Իկիտպաշեան	106	127
Հիսար Եւ Պօյաճի քիւղ	Արաբկեր	Աղքամար
78 Յովհաննէս Արշակունի Բ 7	107 Կարապետ Խաչիկեան Բ	128
Նոր քիւղ Եւ Սրէնիա	Բադէշ	Հալեպ Եւ Այնթապ
79 Ղազար Հովնեան Բ	108	129
Պալատ	Պուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ 2	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան Բ 2	Եւդոկիա	Թուսճուխ
82 Տեղեմաք Էնքսէրճեան	110	131
Քարակեօմիքիկ	Ամասիա	Կարա
83 Սեպուհ Թիւրապեան Բ 2	111 Համբարձում Ալաճաճեան Բ 2	132 Արրահամ Յ. Սյվազեան
84	Բալու	Զմշկածագ
(Եւ Վիճակ)	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ Գ	133 Համբարձում Սարգիս շիշեան Բ
Սամարիա	Եղեսիա	Գաղատիա
75 Այլքսան Պէշիքեան	113 Յակոբ Իւթիւսեան	134
88 Եղիազար Մէլիքեան Բ13	Մանգըլիս	Ատանա
86 Մինաս Ճափճաֆեան Բ 2	114	135
88 Նազարէթ Շահապետեան Բ	Հաճըն	Սդերդ
89 Յարութիւն Թիւրեան	115	136 Մատթէոս Ալէքսանեան Բ
90 Յակոբ Արշակ Բ 2	Երզնկա	Եօզղատ
91 Սեպուհ Թիւրապետեան	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ	137 Լօղօֆէթ Պալօղեան
92	Թերիքտաղ	Մալաթիա
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան Բ
94	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	118 Գէորգ Գըլճճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ	Խարբերդ	Եզիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան Բ 4	119	140 Սրբահամ Մարտոնեան Բ
97 Սարգիս Արրահամեան Բ12	Պալքեսեր	
98 Մ. Արծրունի Տօրթօր Բ 9		
99 Սարգիս Քափուքճեան Բ Գ		
100 Աթանազիոն Արապեան Բ13	120	

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

- Ա. Բողոքադիր Տիգրանակերտի գաղարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի.
— Վիճարանութիւն ի վերայ Իրաւասութեան դիւանի տեղեկագրոյն :
- Բ. Առաջարկութիւն վարչութեան յուսելուածական վարկի մասին . — Վիճարանութիւն ի վերայ Համբարձումութեան դիւանի տեղեկագրոյն :
- Գ. Խնդիր Խարբերդի Երեսփոխանակին ընտրութեան . — Վիճարանութիւն ի վերայ Նախահռչակութեան դիւանի տեղեկագրոյն :
- Դ. Տեղեկագիր Մայր դիւանի ի վերայ 37 անդոյժ խնդրոց :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ՛ Ամեն Սրբազան Պատրիարքն իւր անձնական տկարութեան պատճառաւ չ'պիտի կարենայ այսօր Ժողովին ներկայ գտնուիլ եւ նախադահել, եւ թէ՛ իւր կողմէ առժամեայ նախագահ նշանակած է զՏ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան, Ատենապետ քաջաւ ժամ 8 1/2 անցած ի ներկայութեան 30 Երեսփոխանաց, որոց թիւն 32 ի յանդեցաւ ի վերջէ :

1.

Խնդիր վաւերացման ժե. Նիստի
ատենագրութեան :

Նախընթաց ժե. նիստի ատենագրութեան

նը տպագրուած եւ Ժողովոյ դումարումն առաջ ցրուած լինելով՝ Ատենապետ Էֆէնտին ի դիտողութիւն հրաւիրեց զԵրեսփոխանս նոյն ատենագրութեան վրայ, սակայն Ժողովն Երեսփոխան Ք. Ղազարոսեան Էֆէնտին առաջարկութեան վրայ՝ ՈՐՈՇԵՑ յառաջիկայնիստին վերադառնալ անոր վաւերացումը :

2.

Բացակայութիւն Երեսփոխանաց

Երեսփոխաններէն՝

1. Գրիգոր Էֆէնտի Սէլիմիէեան

2. Պօղոս » Թորգոմեան

գրով ծանուցած լինելով թէ՛ անձնական տկար

բութեան պատճառաւ ստիպուած են այսօր-
եայ նիստէն բացակայ մնալ, Ատենապետ է-
ֆէնտին անոնց անունը կը յիշատակէ, եւ բա-
ցակայութիւնն իբր օրինաւոր՝ արձանագրել
կուտայ ներկայութեան տուեալներն մէջ:

3.

Խնդրագիր Թիւրքիստանի Նիկողոս Էֆենտի

Թիւրքիստանի Նիկողոս Էֆէնտի կողմէ
մատուցեալ յետագայ խնդրագիրը կարգաց-
ուեցաւ:

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգ. Ժողովոյ.

Խարբերդի Գաւառին Երեսփոխանա-
կան ընտրութեան խնդրոյն առթիւ՝ առ
Պատկ. Ժողովդ. մատուցած խնդրագրոյս
վրայ, Ձեր Նախաձեռնութեան գիւանին
տեղեկագիրն Օրակարգն անցած կ'տես-
նուի, զոր հարկաւ Պատկ. Ժողովդ. նկա-
տողութեան պիտի առնու:

Պարտք կ'համարիմ յայտնել հրա-
պարակաւ իմ շնորհակալութիւնս նախ
Պատկ. Ժողովոյդ: Կարեւորութիւն ընծա-
յած ըլլալուն համար իմ խնդրագրոյս, եւ
երկրորդ՝ Ձեր Նախաձեռնութեան գի-
ւանին, իւր ծանրածանր եւ բազմադիմի
ղբաղմանցն հակառակ խնդրագրոյս ման-
րախոյզ քննութեան տեղեկագիրը ուր ու-
րեմն Մայր գիւանիդ յանձնել բարեհա-
ճած լինելոյն համար:

Խնչպէս խնդրագրոյս, նոյնպէս եւ
Նախաձեռնութեան գիւանի տեղեկագ-
րոյն մէջ, խնդիրը երկու դատ եւ անջատ
տեսակներու բաժնուած է, մին՝ գաւառ-

ռի մը երեսփոխանական ընտրութեան
ընդհանուր իրաւանց կէտը. որոյ պաշտ-
պանութիւնը Ազգ. Ժողովոյդ թողուած
է, եւ միւսն՝ իմանհատական իրաւանցս
կէտը՝ որոյ պաշտպանութիւնն ալ հար-
կաւ ինձ անկ պիտի լինի:

Եւ քանզի Նախաձեռնութեան գի-
ւանը՝ իմ անհատական ազգային իրա-
ւանցս մասին՝ ապագայ արդարացումն
ասպարէշ մ'ինձ բաց կ'թողու եւ այժմ իմ
անձինս վրայ մեղադարտ հանգամանքներ
նշմարել կը կարծէ Պատկ. Ժողովոյդ ա-
ռաջը. թէպէտ մեր ատենական կանոնագ-
րին մէջ չկայ, բայց քանզի բոլոր խոր-
հրդարանական ազգաց ատենական կա-
նոնագիրք կ'տրամադրեն թէ, երբ
Երեսփ. Ժողովէն օտար մէկը, լրագրա-
պետ թէ՛ գրագէտ՝ եւ կամ սոսկ մաս-
նաւոր անհատ մը, խորհրդարանին ի-
րաւանցը կամ արժանեացը դէմ յանցա-
նաց մէջ դատուած լինիլ ամբաստանուի,
այն ատեն խորհրդարանը՝ իրրեւ վեհա-
գոյն եւ ամենակարող (օմնիքօման) առ-
եան մը, զամբաստանեալն ինքզինքը
պաշտպանելու, արդարացնելու կամ նե-
րումն խնդրելու համար սոսկ իւր ատ-
եանին առաջն ընդունելու պայմանաւ,
կարող է զանի պատժել, եւն:

Ըստ ատենական սոյն ընդհանուր օ-
րինաց, ես եւ վստահ եմ Ձեր կորովա-
միտ արդարասիրութեանը վրայ, թէ
Պատուարժան Ժողովդ՝ իմ սոյն խնդրոյս
վրայ՝ իւր վերջնական վճիռը չ'տուած,
Նախաձեռնութեան գիւանի տեղեկագ-
րոյն եղրակացութիւնը քուէի ենթարկե-
լէ առաջ, գէթ զիս եւս իբր ամբաս-
տանեալ Պատկառելի Ատենիդ առաջը
կոչելու, եւ անձինս արդարացումն
համար ինձ եւս երկու խօսք շնորհելու

բարեհաճութիւնը չ'պիտի ուզէ զանալ
յինէն:

Որոյ վասն կանխաւ յայտնելով եւ
րախտագիտական շնորհակալիքս,

Մնամամենախորին մեծարանօք

Խարբերդի գաւառէն ընտրեալ՝

բայց ոչ վաւերացեալ Ազգ. Երեսփ.

6 Մարտ 1880

Նիկ. Մ. Թիւրքիստանի

Կ. Պօլիս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնչպէս կը տեղեկա-
նաք սոյն խնդրագրէն, Թիւրքիստանէն է-
ֆէնտին Ազգ. Ժողովոյ արդարասիրութեան
աղաքատանելով կը խնդրէ որ իւր Երեսփոխա-
նական ընտրութեան խնդրոյն վրայ՝ Նախա-
ձեռնութեան գիւանի տեղեկագիրն եղրակա-
ցութիւնը քուէի չ'ենթարկած եւ իւր վերջ-
նական վճիռը չ'արտասանած՝ բարեհաճի զինք
իւր ատենին առաջ կոչել, եւ իրեն երկու
խօսք տալ որ կարենայ արդարացնել զինքը:
Նախաձեռնութեան գիւանի տեղեկագիրն,
խնչպէս յայտնի է այսօրեայ նիստի օրակարգն է
արդէն, սակայն ժողովը Թիւրքիստանէն էֆէն-
տի այս նոր խնդիրը նկատողութեան առնե-
լու եւ իւր որոշումը տալու համար՝ ըստ կա-
նոնի պէտք ունի Նախաձեռնութեան յանձնելու
զայն. ուստի, եթէ կը հաճիք, կը յղենք այս
խնդրագիրը Նախաձեռնութեան գիւանին, եւ
անոր կարծիքն ստանալով կ'որոշենք զարժան
այս մասին:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Շատ
իրաւացի է այդ գիտողութիւնն, ուստի պէտք
է խնդիրն յղել իւր ձեռնհաս Դիւանին:

ՄԷԼԻՔԵԱՆ Դ. ԷՖ. — Կէտ մը կայ սակայն,
որ յարակից է յղման գործողութեան եւ պէտք
է՛ զայն անյիշատակ անցնիլ: Երբ ժողովն այ-
սօր որոշէ Թիւրքիստանէն էֆէնտի խնդրա-
գիրը Նախաձեռնութեան յղել, ըստ որում
խնդիրը Նախաձեռնութեան գիւանի տեղե-

կագրին վրայ է, եւ այդ տեղեկագիրն օրա-
կարգն է արդէն, քննադէս ժողովը հաւանած
կը լինի տեղեկագրին նկատառումը յետաձգե-
լու, մինչեւ որ Թիւրքիստանէն էֆէնտի մա-
տուցած խնդիրն Նախաձեռնութեան անցնի եւ
իւր որոշումն ստանայ: Ուստի կարծեմ թէ
ի վերջէ չ'իտթութեան տեղի չ'իտթելու համար,
այս երկու կէտերն իբրեւ իրարու յարակից
պէտք է միանգամայն որոշել այժմէն:

ՁԱՅՆԵՐ. — Այո, այո:

Հետեւապէս ժողովը ԿՈՐՈՇԷ Թիւրքիստա-
նէն էֆէնտի խնդրագիրը Նախաձեռնու-
թեան գիւանին յղել ի նախաքննութիւն, եւ
մինչեւ սոյն խնդրոյն որոշումն յետաձգել
Խարբերդի Երեսփոխանական ընտրութեան
նկատմամբ նոյն Դիւանի կողմէն մատուցեալ
տեղեկագրին նկատառումը:

4.

Ռաֆայէլեան Սիմօն Էֆենտի առաջարկու-
րիւնը

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փարիզ գտնուող ազ-
գայններէն մին՝ Սիմօն Ռաֆայէլեան էֆէնտի
հանրական խնդրոյ մը նկատմամբ գրաւոր ա-
ռաջարկութիւն մ'ըրած է առ Ազգ. Ժողովն:
Մայր գիւանն անոր ստորագրութեան իսկու-
թիւնն ստուգելէ ետեւ՝ կը ներկայէ ձեզ ա-
հաւաստի այդ առաջարկը:

Մեծապատիւ Տեառք Երեսփոխանք.

Ազգ. մը երջանիկ կենաց անկալե-
լու համար՝ երկու հարստութեանց ան-
միջական պէտք ունի, որոնք միմեանց
հետ այն աստիճան սերտ առնչութիւն
ներ ունին, որ անհնար է մին միւսէն ան-
ջատել, ինչպէս եւս անկարելի է միոյն

տիրանայ ապահով իմն. առանց զմուսը մշակած լինելու: Այս հարստութիւններն են մտաւորականն ու նիւթականը:

Այս անհերքելի ճշմարտութիւնը որ այսօր տիեզերական սկզբանց ամենէն կարեւորն է, ընդունելէ վերջը, հարկ կըլլայ մեզ խղճի մտօք մեր անցելոյն ու ներկային վրայ քննադատական ակնարկ մը նետելով հարցնել թէ, արդեօք այս երկոցունց և գէթ միոյն տիրացած է Ազգերնիս, կըրցաւ և կընայ միմէ՛ առանց ամաչելու լուսաւորեալ աշխարհի ներկայանալ՝ իւր պահանջած երջանիկ և անդորր կենաց հիմանց մին կամ զերկուսն ՚ի ցոյց ածելով. և թէ վերջապէս իւր դերութեան չղթաները ջախջախելով ազատ մարդկութեան ազատ դրօշը պարզելու անհրաժեշտ այս երկու պայմանները ձեռք բերելու համար բրած զոհողութեանց և ջանից ցանկը կըրցաւ ներկայացնել, եթէ երբէք այն օրինակ զհեր բրած ունէր: Դժբաղդաբար ո՛չ ընդհակառակն ամէն ինչ յայտնապէս ցոյց տուաւ, թէ Հայը իւր ապագայն անտարբեր աչօք է դիտած, չէ ընծայած Ազգային դաստիարակութեան խնդրոյն իւր արժանաւայել կարեւորութիւնը, նորա ծաւալմանն ու զարգացմանն համար չէ բրած այն զոհողութիւններն՝ որք վերածնութիւն երազող ազգաց իրականութիւն սարգեւեցին, որպէս զի Հայը եւս իրաւունք ունենար իւր քրտնաթոր վատակոց արդիւնքը պահանջել և ստանալու, և որ աւելի ցաւալին է՝ անցելոյն այս ազգակործան անտարբերութեան պոտճառաւ ընդունած հարուածէն չըսթափելով՝ այսօր եւս նոյն մեռելատիպ և խոր քնոյն մէջ կը խորդայ: Արդարեւ բաղդատմամբ այլ ազգաց՝ որչափ ծայրա-

յեղ եւս ըլլայ Հայոց աղքատութիւնը՝ առանց կարմրելու չպիտի զօրենք ակնարկ մը նետել Ազգային վարժարանաց անբաւականութեան, ինչպէս նաեւ կեդրոնաւորական պիւտժէին այն էջին վրայ՝ ուր Ազգային դաստիարակութեան ծախուց համար մի միայն յիշան հաշար դանկեան, տառն հազար ֆրանքի չնչին գումար մը յատկացեալ կը աւանդուի, մինչդեռ էապէս վերածնունդ ձեռք բերել մտածող ազգեր՝ միլիոններ յատկացնել և ծախսելէ վերջը՝ տակաւին բաւական տնօրինած չըլլանէն կը տժգոհին: Իրաց այս այս ցաւալի միճակը խորասոյզ աչօք քննողի մը համար, Հայոց վերածնութեան յոյսը պարզ ցնորից և երազական կերպարանք մը կ'զգենու:

Ձեմ՝ գանգատիր, Տեարք երեսփոխանք, թէպէտ իւր ազգային անհատ և Ազգին ապագայ անդորրութեանն ու վերածնութեանը ՚ի սրտէ ցանկացող իրաց այս ցաւալի և ճշգրիտ վիճակէն գանգատելու իրաւունք ունենալաւ ալ դիտեմ, այլ Ձեզ, որ Ազգին արժանաւոր ներկայացուցիչներն էք, և Ազգին ապագային պատասխանատուութիւնը ստանձնած կը տքնիք, Ձեզ կը դիմեմ հարցնելու համար թէ, հանրութեան օժանդակութեամբը ոգեւորեալ՝ Հայաստանի՝ մեր գժբաղդ հայրենեաց մէջ դաստիարակութիւն ծաւալելու նուիրական պաշտամամբ գործող ընկերութեանց անբուն և անգին ջանից հետ բաղդատելով՝ Ազգային Պատկառելի վարչութեան տնօրինած զոհը միմէ բաւական կը դատէք: Ո՛հ, Ձեր ամենեցունց միաբերան արտասանած չը անդունդները ճեղքելով՝ ականջը կը թնդացնեն: Վստահ էի Ձեր այս զգացմանց վրայ, և կ'ապաստէի այս պա-

տասխանն ընդունելու, սակայն միւս կողմանէ չէի մոռնար նաեւ թէ, կեդր. անտուկին անձուկ կացութիւնը առարկելով պիտի հարցնէիք ինձ թէ, միջոց մը ունի՞մ արդեօք այս կենսական խնդրոյն յատկացեալ եկամտի աղբիւր մ'ընծայող:

Այո՛, Տեարք երեսփոխանք, ունիմ միջոց մը՝ որ Ազգ. դաստիարակութեան նպաստելու համար անսպառ աղբիւր մը ընծայելէ զատ, յաւէտ կը ջնջէ այն ամէն անկարգութիւններն, որոնց առօրէական ցաւալի հանդիսատեսդի մ'է դարձած Դաստատանական Ժողովոյ ատենանը: Եւ ահաւասիկ:

Երեսփոխանական Պատկ. Ժողովն չանդիտանալ անշուշտ թէ, ընդհանուր առմամբ Հայոց ծնունդը, ամուսնութիւնը, կրկին ամուսնութիւնը և մահը, ներուի ինձ համարձակ խօսելու, ինչ աստիճան անկանոն և ապօրինաւոր եղանակաւ կարձանագրուին թէ Թաղ. խորհրդոց և թէ Պատրիարքարանի տօմարոց մէջ, և այն ալ մի միայն ՚ի Կ. Պօլիս, մինչդեռ սոցա հետքն անգամ չտեսնուիր զաւառաց մէջ, քանիցս գժուարութիւնք կը ծագին և որքան ծախսեր ընել հարկ կըլլայ, եթէ մին իւր ծննդեան թուականը ճշգրտութեամբ ուղէ: Ո՞ դիտէ Հայոց ճշգրիտ ազգահամարը: Քանիցս գաւառացի կամ Պօլսեցի ազգայինք՝ իրենց ընտանիքն ու զաւակունքը յետին չքաւորութեան և թշուառութեան մէջ թողնով՝ այլուր ամուսնացած են իրր ամուրի ոմն: Այս և այսօրինակ եղելութիւնք անշուշտ չարեաց գործ են, բայց միմէ՞ Ազգային վարչութիւնը ծանր պատասխանատուութեան տակ չընկճիր, երբ մեր վարկմի ապօրինի օրէնսդրութեանը կը հանդուրժէ, ու

բով անհամար չարեաց և թշուառութեանց ազատ ապարէզ կը թողու և զայնս կերպով մը խրախուսած կըլլայ: Ուրեմն ինչ բան կ'արդիւնէ Ազգային վարչութիւնն՝ օրինաւոր ազգաց հետեւելով՝ հրատարակել օրէնք մը և հնարել տետր մը՝ ֆինցադաֆիլ անուամբ կամ որ և է այլ անուամբ, ուր ծնունդն, ամուսնութիւնը, և մահը նշանակուին, Պօլսոյ համար Թաղ. խորհրդոց և Պատրիարքարանի կնիքներովը, իսկ գաւառաց համար Թաղ. խորհրդոց, եթէ կան, և Ս. Առաջնորդի կնիքներովը վաւերացեալ, և այս տետրն այնպէս իմն պարտաւորիչ ընել, որ ոչ ոք կարող ըլլայ՝ առանց այդ տետրն ՚ի ձեռին ունենալու, զաւակը մը կըրտնէ, կնքահոյր ըլլալ, զաւակն ամուսնացնել, կնքահայր կամ կնքամայր ըլլալ, նշանել կամ նշանուել, և մինչեւ իսկ մահուան ժամանակ տրարողութիւն չկատարուի առանց անոր, վերջապէս Պատրիարքարանի, Առաջնորդաց, Թաղ. խորհրդոց հետ գործ ունեցողներէն և մինչեւ իսկ դպրոց գացող մանչ ու աղջիկ աշակերտներէ ետեւ. պահանջել: Այս եղանակաւ քիչ ժամանակուան մէջ այդ օրէնքը կը գործադրուի և Ժողովուրդը կը սովորի: Լուծութեամբ կ'անցնիմ խել մը կէտերու վրայ, որպէս զի Պատկ. Ժողովուրդ արդեւ չըլլամ այլ կարեւոր խնդիրներով ալ զբաղելու: Այս տետրակները Պատրիարքարանի կողմանէ կը ծախուին Թաղ. խորհրդոց և Առաջնորդաց, սա պայմանաւ որ ծննդեան, ամուսնութեան, կրկին ամուսնութեան և մահուան արձանագրութեանց ամէն մէկուն համար 5 ախան դահեկան ողջ դրամ տուր մ'առնուի, դիւրին է մեկաբերել թէ ամէն ոք դիւրաւ կը վճարէ այդ

տուրքը : Ահա այս առթիւ պատրաստած մի տետրս ջեր Պատկ. Ժողովոյ կը ներկայացնեմ. զայն կանոնադրելու պաշտօնը ինձմէ աւելի հմտաց թողլով : Իսկ եղած հասոյթը՝ Եւրոպական գրամատուն մը 'ի շահ ածելով, արդեամբը Պօլսոյ և ամեն մէկ դաւառաց մէջ կեդրոնական դպրոցներ կը բացուին, յաջողակ աղքատիկ տղայք յեւրոպա կը խրկուին զանազան ուսմանը և արհեստներ ուսանելու, և Ազգային գրագիտութիւնը ծաղկեցնելու համար՝ հատընտիր գրուածոց վարձատրութիւններ կը տրուին 'ի քաջալերութիւն : Ահա այն ատեն Ազգային Պատկառելի վարչութիւնը Ազգին ներկայ և ապագայ սերնդոց անհուն երախտեցը վրայ իրաւունք կ'ստանայ :

Յուսալով, Տեառք Երեսփոխանք, որ այս առաջարկութեանս արժանավայել կարեւորութիւնն ընծայելով՝ Ազգային ընդհանուր դաստիարակութեան ոսկեդարը կը տօնէք, իմ խոնարհ և անկեղծ յարգանացս հաւատարման ակնածանօք մատուցանելով : մնամ

Երեսփոխանական Պատկ. Ժողովոյդ ամենախանարհ ծառայ

1/13 Փետրվ. 1880 Սիւնն Ռաֆայէլեան Փարիզ

(Յետ ընթերցման)

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է.Ֆ.— Քաջ կը յիշեմ որ ասկէ քանի մը տարի առաջ հանդուցեալ հանիկ էֆէնտի Արամեան, իմ բարեկամս, մի եւ նոյն նիւթին վրայ առաջարկութեան ծրագիր մը ներկայացուցած էր, որ հրատարակուեցաւ այն ատեն Մասիս լրագրոյ մէջ : Զը զիտեմ ինչ պատճառաւ այդ ծրագիրն նկատուիւթեան չառնուեցաւ, և անոր դործադ-

րութիւնն յապաղեցաւ ցարդ : սակայն դո՛ւ եմ որ այժմ ուրիշի մը կողմէ վերստին կը ներկայանայ այս առաջարկն, որու կարեւորութեան ես ի վաղուց համոզուած եմ, ուստի կառավարկեմ զայն նախաքննութեան յղելէ ետեւ՝ Ազգ. վարչութեան յանձնել 'ի դործադրութիւն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է.Ֆ.— Ես ալ կառավարկեմ առ անհատ խնդիրներ ընաւ չլերել այս ժողովին, որու հետ վերաբերութիւն չունին : Ասոնք պարզապէս վարչութեան ներկայանալի խնդիրներ են, և էրբ վարչութիւնն իւր ձեռնհասութենէն վեր դառնէ, կրնայ ուղղակի ինք բերել հաս : Կը ցաւիմ որ ժողովը ժամապաճառ կընեն այսպիսի դրութեանց ընթերցմամբ, որոնք աւելի լրագրաց մէջ հրատարակելի յօդուածներ կրնան ըլլալ :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ.— Դիւանը հարկ կը համարի յայտնել որ այս առաջարկութիւնն յանուն Ազգ. ժողովոյ ուղղուած լինելով՝ Սըրբազան Պատրիարքն ոտիպուած էր զայն ժողովին յանձնել :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է.Ֆ.— Քրիստոստուր էֆէնտի բարեկամս այս առաջարկութեան ժողովիս ներկայացուելուն դէմ կը խօսի, բայց կարելի է կը մոռնայ որ ըստ ներքին կանոնադրի ժողովը պարտաւոր է իրեն մատուցեալ թէ առաջարկութիւն թէ բողոք լսել, զորս՝ եթէ արժան դատի՝ կընդունի, և նախաքննութեան կը յղէ, և կամ կը մերժէ : Ուստի պէտք է այս կանոնին համեմատ շարժիլ և յանուն ժողովիս եկած ամէն գրութիւն ներկայացնել, եթէ ոչ՝ կրնայ շատերուն զրկանք սպասանիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է.Ֆ.— Ես չեմ պահանջեր որ այս ժողովին ընաւ որ և է գիր կամ առաջարկութիւն ներկայանայ դուրսէն, այլ ինչպէս որ նոյն իսկ Քաթիմաճեան էֆէնտին յիշեց, պէտք է որ ըստ կանոնի ներկայանայ : Ամեն ազգային անհատ ազատ է առաջարկել ինչ որ կը մտածէ յօդուած Ազգին և կարեւոր

կը համարի, և անոնք որ այսպէս չեն ըներ կամ անկարող են կամ անտարբեր, սակայն՝ վարչութեան ներկայանալի կամ լրագրաց մէջ հրատարակելի նիւթեր պէտք է որ այս ժողովին ներկայանան որ ժամանակի կորուստ պատճառելէ զատ՝ ուրիշ հետեւանք մը չեն կրնար ունենալ : Ահա այս է իմ ըսածս :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ.— Դիւանը զիտել կուտայ որ խնդիրն այս ժողովին տնօրէնութեան չվերաբերի, ուստի նախաքննութեան յանձնել աւելորդ է, այլ պէտք է Ազգ. վարչութեան յղել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է.Ֆ.— Եթէ Երեսփոխան մ'ըստանանէ այդ առաջարկն, այն ատեն կրնայ խնդրոյ նիւթ ըլլալ և նկատողութեան առնուիլ, եթէ ոչ՝ հարկ կըլլայ վարչութեան յղել ոչ թէ 'ի գործադրութիւն, այլ իբրեւ իրեն ձեռնհասութեան վերաբերեալ խնդիր մը : Դուրսէն եկած գրութիւններն և ոչ իսկ կըրնան կարգացուիլ այս ժողովիս մէջ, այլ ըստ ներքին կանոնադրի՝ Ատենապետ էֆէնտին համառօտակի անոնց ամփոփումը կը հաղորդէ ժողովին, վասն զի եթէ այսպէս չըլլայ խնդրարկութեմ կամ առաջարկութեմ յայտնաւորի մեծութեամբ գրեր կը ներկայացնեն և ժողովը կը պարտաւորի իւր նիստերն մի միայն անոնց ընթերցմանը զոհել, և ատենց ուրիշ խնդրոց զբաղելու՝ ատենը փակել, ուստի այս վիճակին մէջ չիյնալու համար՝ կանոնն այսպէս տրամադրեր է, և Դիւանը կը պարտաւորի եկած գրերուն մի միայն իմաստը հաղորդել ժողովին : Իսկ երբ առաջարկութիւններ տեղի ունենան դուրսէն, Սըրբազան Պատրիարքը պարտաւոր է վարչութեան յղել, և չէ թէ Ազգ. ժողովին բերել, և երբ վարչութիւնն այսպիսի կէտ մը տեսնէ, որ այս ժողովին ձեռնհասութեան վերաբերեալ լինի, այն ատեն կը բերէ խնդիրն իւր տեղեկագրովը : Գալով ծննդեան վկայագրի խնդրոյն՝ ստուգիլ նոր առաջարկութիւն մը չէ այս : Հանիկ էֆէնտի Արամ, և անկէ առաջ Սերվիշէն և Ռո՛ւֆնեան էֆէնտիներ արդէն ըրած են այդ

առաջարկութիւնն, և բաց ասկէ՝ նոյն իսկ վարչութիւնն անցեալ տարի ելմացոյցի տեղեկագրին մէջ այդ խնդիրը ներկայացուցած և համարակալութեան գիւտնն ալ պայմանի մը ներքեւ եղած առաջարկն ընդունած է, և տեւաբար այս առաջարկը նոր չէ, և քանի որ զայն ստանձնող Երեսփոխան մը չկայ, չը կրնար խնդրոյ նիւթ ըլլալ, և կը յղուի պարզապէս վարչութեան իբրեւ խնդիր մը, որ իւր հեղինակութեան կը վերաբերի :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ.— Ինչպէս 'Դիւանը զիտեց արդէն, սոյն առաջարկը վարչութեան պէտք է յղել, ուստի եթէ ժողովը համաձայն է, կը կատարեմ յղումը :

ԶԱՅՆԵՐ.— Շատ աղէկ, շատ աղէկ :

Հետեւագէտ ժողովը ԿՈՐՈՇԷ Ռաֆայէլեան էֆէնտի առաջարկը յղել Ազգ. վարչութեան իբրեւ իւր հեղինակութեան վերաբերեալ խնդիր :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Բողոքագիր Տիգրանակերտի դաղարեալ առաջնորդ Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ.— Կը յիշէք անուշտ որ ժողովը նախորդ նիստին մէջ Տիգրանակերտի դաղարեալ առաջնորդին Փիլիպպոս Եպիսկո-

պոսի խնդրոյն վրայ՝ Իրաւասութեան Դիւանի կողմէ մատուցեալ տեղեկագիրը՝ վերադարձնելով առ նոյն Դիւանն յանձնարարած էր իւր անդամակիցներէն Օտեան Նշան էֆէնտիի հետ, որ Դիւանին կատարած քննութեան մասնակից չ'էր գտնուած, խորհրդակցելու եւ այնպէս բերել իւր տեղեկագիրն։ Մինչեւ ցայս վայր՝ սպասուած տեղեկագիրը աւանդուած չ'է դեռ Մայր դիւանին, սակայն նոյն իսկ Փիլիպպոս եպիսկոպոսի կողմէ մատուցեալ խնդրագիր մը կը տեսնեմ մեր սեղանին վրայ, որով յետոյ կը կոչէ նա իւր բողոքը։ Եթէ ժողովը ընդունի այս յետոյ կոչումն, այն ատեն բնապէս Փիլիպպոս եպիսկոպոսի խնդիր չը մնար մեր սեղանին վրայ, եւ ոչ եւս պէտք կունենանք Իրաւասութեան դիւանէն տեղեկագիր պահանջելու, եւ խնդիրն այս կերպով ելք կը գտնէ եւ կանցնի ժողովէս։ Ահաւասիկ կը ներկայացնեմ ձեզ Փիլիպպոս եպիսկոպոսի խնդրագիրն։

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. ժողովոյ։

Ստորագրեալս նկատելով որ Տիգրանակերտի խնդրոյն օրինաւոր լուծման համար յատկապէս քննիչ զրկած է Ս. Պատրիարքն 'ի նոյն գաւառն, ինչպէս որ օրէն է այսպիսի պարագայից մէջ դիմել գաւառին ժողովրդեան օրինաւոր ներկայացուցիչն եւ նորա կամքն ու կարծիքն առնուլ։

Նկատելով որ այսու եղանակաւ իմ Սահմանադրական անբռնարարելի իրաւունքս յարգուած կը լինի եւ այլ եւս խնդիր չմնար։

Ուստի ներկայիւս յետակը կոչեմ առ պատկառելի Ազգ. ժողովը մատուցած բողոքս եւ հետեւաբար իմ խնդիրս Ամե-

նապատիւ Ս. Պատրիարք Հօր արդարասիրութեանը կը յանձնեմ։

Խոնարհ պաշտօնեայ
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ

7 Մարտ 1880

Փիլիպպոս եպիսկոպոս
Խ. Նաճտուեանց

Ը (Յետ ընթերցման)

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Փիլիպպոս եպիսկոպոս բողոք բարձած է առ Ազգ. ժողովն՝ Վարչութեան դէմ, զինքը պաշտօնանկ ընելուն համար, իսկ այսօր ելեր յետոյ կը կոչէ իւր բողոքն։ Իւր այս յետոյ կոչումն կրնար նշանակութիւն մ'ունենալ եթէ խոստովանէր նա իւր գրոյն մէջ թէ պակասաւոր ընթացքի մէջ գտնուած է, ինչպէս կասկածուցանեն Վարչութեան ձեռքը գտնուած գրերն, ինչպէս կը հաստատէ Իրաւասութեան դիւանի տեղեկագիրն, եւ ինչպէս նաեւ Օտեան Նշան էֆէնտին, որու կարծիքն առիթ ունեցանք լրսելու արդէն, կը յայտարարէ թէ Փիլիպպոս եպիսկոպոս իրաւունք չունէր բողոքելու, եւ այս կերպով նա եւս կը յարի իւր անդամակցաց։ Ուստի ես յանուն Վարչութեան չեմ կրնար ընդունիլ այդպիսի յետոյ կոչում մը։

Փիլիպպոս եպիսկոպոս իւր խնդրագրին մէջ Միթիարեան Խորէն եպիսկոպոսի պաշտօնին ակնարկելով՝ կըսէ թէ Տիգրանակերտի խնդրոյն համար քննիչ զրկուած է Ս. Պատրիարք Հօր կողմէ եւ ասկէ հետեւցնել կուզէ թէ՛ այլ եւս պէտք մնացած չէ խնդիր։ հոս քննելու, սակայն պէտք է գիտնալ որ Խորէն եպիսկոպոս քննիչի պաշտօն չունի բնաւ, այլ առժամանակեայ պաշտօնատար մ'է, զոր նըրբազան Պատրիարքը յուղարկած է, վիճակը թափուր չթողելու համար, Ազգ. ժողովոյ կողմէ եղած յանձնարարութեան վրայ, ինչպէս կերեւի Ազգ. ժողովոյ ատենագրութենէն, տընօրէնութիւն մը, որու մասնակից չէ եղած Վարչութիւնն։ Ուստի Փիլիպպոս եպիսկոպոսի յետոյ կոչումն նշանակութիւն չունի եւ չը

կրնար այս խնդիրն Ազգ. ժողովոյ դիւանին վրայէն խլել։ Ձեր ընտրած Վարչութիւնն աւերաստանեալ է այս ժողովին առջեւ թէ Առաջնորդ մը յանիրաւի պաշտօնանկ ըրեր է, Վարչութիւնն իւր տնօրէնութեան արդարութեան վրայ վստահ է, եւ իւր պատճառները ձեզ ներկայացնել կուզէ, թոյլ տուէք ռեբմին, Տեառք երեսփոխանք, որ իւր գրութիւնները ներկայացնէ, թոյլ տուէք որ խօսի, եւ այն ատեն՝ դուք ինքնին, տարակոյս չունիմ թէ քուէ պիտի տաք որ յանցաւոր է Փիլիպպոս եպիսկոպոս։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Փիլիպպոս եպիսկոպոս ժողովիս արդարասիրութեան դիմելով բողոք բարձաւ իրեն դէմ եղած զըրկանաց համար, եւ ժողովս այդ բողոքը ներկատողութեան առնելով նախաքննութեան յըղեց խնդիրն, առանց Ազգ. վարչութիւնն աւերաստանեալ նկատելու, բայց Վարչութիւնն իրմէ բացառութիւն չուզուած՝ ելաւ յայտարարեց թէ այս խնդրոյն վրայ համար տալ կուզէ։ Այո՛, Տեառք, Վարչութիւնն ազատ է միշտ իւր համարը տալ, երբ որ եւ է խնդիր ծագի իրեն դէմ, սակայն երբ Փիլիպպոս եպիսկոպոս կըսէ թէ բողոք չունիմ, 'կըսէ թէ քննիչ զրկուած է արդէն Տիգրանակերտ' խընդիւրն սահմանադրապէս Գաւառական ժողովոյ ձեռք, քննելու համար, կը զարմանամ որ Մատթէոս եպիսկոպոս կը պնդէ թէ Վարչութիւնն ամբաստանեալ է, եւ պէտք է համար տայ։ Եթէ Վարչութիւնը զինքն ամբաստանեալ կը նկատէ, զոր չեմ յուսար, այն ատեն հարկ կըլլայ զայն քննութեան ենթարկել։ Ես ինչպէս գիտեմ առջի օրէն խնդիրք մինչեւ այս աստիճանն չը տարի, եւ ընաւ չըսի թէ Վարչութիւնն անբաստանեալ է, այլ ըսի թէ՛ Վարչութիւնը Տիգրանակերտ պատուիրակներ զրկած էր, եւ վստահելով անոնց յայտարարութեանց՝ առաջնորդը պաշտօնանկ ըրեր էր։ Անշուշտ արտաքայ կարգի պարագայից ներքեւ Վարչութիւնը իրաւունք կրնար ունենալ այսպիսի տնօրէնութիւն մ'ընելու, սակայն պաշտօնանկ Առաջնորդն ալ իրաւունք ունէր անշուշտ բո-

ղոքելու, եւ արդարութիւնն չէր զայն մերժել։

ՁԱՅՆ ՄԸ. — (Ընդմիջելով) Եւ ո՞վ մերժեց անոր բողոքը։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Եւ որովհետեւ այս բողոքը սահմանադրական պաշտօնէի մը կողմէ կուզար, ժողովն որոշեց զայն նկատողութեան առնուլ։ Բայց գիտէք որ Սահմանադրութեան համաձայն Պատրիարքի մ'եւ Առաջնորդի մ'ընտրութեան եւ պաշտօնակութեան եղանակը յար եւ նման է, ինչպէս Ազգ. ժողովն կրնարէ Պատրիարքը եւ պաշտօնէ կը ձգէ, նոյնպէս տեղւոյն Գաւառական ժողովը կրնարէ Առաջնորդը եւ պաշտօնանկ կընէ զայն։ Սակայն երբ Փիլիպպոս եպիսկոպոս այսօր յետոյ կը կոչէ, ըսել է խնդիր չմնար այլ եւս։ Իսկ եթէ Վարչութիւնը կուզէ անպատճառ իւր համարը տալ, չենք մերժեր, միայն թէ պէտք է սպասէ համարատուութեան ժամուն։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Փիլիպպոս եպիսկոպոս եկաւ բողոքեց Վարչութեան դէմ, բողոքեց իրեն աննպաստ տեղեկագիր ընրող նախաքննիչ դիւանաց դէմ, բողոքեց լրագրաց միջոցաւ ամենուն դէմ, եւ երբ իւր բողոքը նկատողութեան առնուեցաւ, եւ խնդրոյն քննութիւնը պիտի կատարուի, ելեր յետոյ կը կոչէ զայն։ Իւր այս ընթացքը կը նշանակէ թէ չվստահիր իւր դատին, թէ յանցաւոր կողմից զինք, եւ միայն ոտքի դրիւնով յաջողիլ կուզէր, իսկ այժմ խոյս կուտայ քննութենէն։ Ահա ինչ որ է կարծիքս յետոյ կոչման գրին վրայ։

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Ինչ ուղիղ հետեւութիւն։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ձեմ կարծեր որ Քախամաճեան էֆէնտի Երեսփոխան պաշտօնակցիս 'դիտողութիւնները՝ զոր կընէ Փիլիպպոս եպիսկոպոսի բողոքին յետոյ կոչման մասին, տրամաբանական լինին։ Այս յետոյ կոչումը սա հիման վրայ հաստատուած

է թէ Սրբազան Պատրիարքը քննիչ զրկեր է 'ի Տիգրանակերտ, ո՞վ է այդ՝ քննիչը, որո՞ւ կողմէ եւ ինչպէս դնաց, Վարչութիւնը չը գիտեր: Եւ այս քննիչը ինչպէս պիտի տեսնէ դատը, քանի որ Վարչութիւնն ինք գիտէ իւր տնօրէնութեան շարժառիթը եւ հոն փոխանորդ մը չունի ըլլալիք քննութեան ներկայ գտնուելու համար, այս ալ խնդիր մ'է: Այլ սակայն պէտք է գիտնալ որ բնաւ քննիչ զրկուած չէ, այլ Սրբազան Պատրիարքըն առաջնորդական տեղապահ մ'անուանած եւ յուղարկած է 'ի Տիգրանակերտ, մինչեւ որ խնդիրը վերջանայ այս ատենսին մէջ: Պատրիարքի մը գաղափարներ տեսնելը դժուար է, կըսենք, սակայն վիճակային առաջնորդ մ'ալ չենք կրնար դատել: Կազմակերպութեան այս դատը եւ եթէ Վարչութիւնը յանցաւոր է, ձեր քուէով ձգեցէք զինքը պաշտօնէ, ու չաղորդեալ առէք եւ դուք: Քափամաճեան էֆէնտի, որ եթէ մէկ կողմն առաջնորդ մը կայ, միւս կողմն ալ Ազգ. Վարչութիւն կը գտնուի:

ԶԱՅՆԵՐ. — (Ընդմիջելով) Պէտք է լսենք Վարչութիւնը:

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Կուգենք որ կարգացուն թղթերը:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — (Շարունակելով) Եթէ վերլուծենք փիլիսոփայութեան առ Ազգային Ժողովն մատուցած բողոքագրերն, զորս չունիմ ձեռքին այս պահուս, պիտի տեսնէք որ պարզապէս ամբաստանեալ է Վարչութիւնը անոնց մէջ, ասոր համար դարձեալ կը պնդեմ որ ինչ որ որոշեց Ժողովն ասկէ առաջ, պէտք է ի դժուար դնել: արդէն Վարչութիւնը լսելու ժամը հասած է, Իրաւաստութեան զիւանի անդամներէն մին անմասն գտնուած էր քննութեան, նա եւս խնդիրն ուսումնասիրելէ ետեւ՝ իւր համամտութիւնը յայտնած է. պէտք է ուրեմն խնդիրը իւր բնական եւ կանոնական ընթացքով յառաջ վարել, եթէ ոչ՝ կարելի չէ մէջէն դուրս ելնել:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ժողովն այս խնդիրն իւր Իրաւաստութեան զիւանին յանձնած էր ասկէ առաջ, որ քննելով եւ ուսումնասիրելով զայն, իւր տեղեկագիրը մատուցած է Ժողովին, որ հրատարակուած կը տեսնենք ատենագրութեան մէջ: Այս տեղեկագիրը փիլիսոփայութեան եպիսկոպոսի Ազգային Վարչութեան գէմ մատուցած բողոքին մերժումը կեցրակայէ, իսկ այսօր նոյն իսկ բողոքարկուն այդ եղբայրացուցեալ մօտ խնդիր մը կը մատուցանէ Ժողովին՝ ըսելով թէ յետեւ կը կոչէ իւր բողոքն եւ թէ՛ կը յանձնէ զայն Սրբազան Պատրիարք Նոր արդարասիրութեան Ազգ. բողոքարկուն խնդիրն ըստ ոգւոյն համաձայն ըլլալով՝ մեր նախաքննիչ զիւանին եղբայրացութեանն, անոր գէմ առարկութիւն յարուցանելու տեղի չմնար, եւ եթէ Ժողովը կը լստա՛ն Սրբազան Պատրիարք Նոր արդարասիրութեան, պէտք է յանձնէ խնդիրն աւորել եւ փակէ զայն, ինչպէս որ կը զիջանի բողոքարկուն:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը ձայնակցիմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է գիտնալ թէ Սահմանադրապէս Պատրիարք եւ Վարչութիւն իրարմէ անջատ մարմիններ չեն, այլ մի եւ նոյն մարմնոյն մասերը կը կազմեն, ուստի կարելի չէ Սրբազան Պատրիարքն իւր ուրոյն մարմին նշկատել, եւ ի մասնաւորի խնդիրներ յանձնել անոր:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ըսող եղաւ թէ Ժողովն երբ Ս. Պատրիարք Նոր վերայ վստահ է, պէտք է խնդիրը յանձնէ աւորել, այս խօսքն տեսա՞ք մ'անփոփոխութիւն կ'ենթադրէ Վարչութեան գէմ, եւ զայն ամբաստանութեան ներքեւ կը դնէ:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ մեկնութիւնը սխալ է, Սրբազան Պատրիարքը Վարչութեան կրկին Ժողովներուն նախապահն է եւ մենք՝ Վարչութիւն եւ Պատրիարք իրեւ մի կը նկատենք. հետեւաբար իմ խօսքս չը կրնար այդպիսի նշանակութիւն մ'ընդունիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ խնդիրը չեղեցաւ իւր բնական ընթացքէն, ուստի՝ իւր Ատենապետ պարտ կը համարիմ քանի մը բացատրութիւն տալ եւ թիւրիմացութիւնները պարզելով՝ հրաւիրել ատենախօսներն որ պազ արեամբ գիտեն խնդիրն իւր բուն տեսակէտէն:

Կիմանամք Մատթէոս սրբազանի յայտարարութենէն որ Ազգ. Վարչութիւնն, այս խնդրոյն մէջ զինքն իւր ամբաստանեալ կը նշկատէ, եւ այս պատճառաւ փիլիսոփայութեան եպիսկոպոսի բողոքանաց յետս կոչման չուզեր հաւանիլ. այս ըմբռնումը սխալ է, եւ Դիւանն չկրնար երբէք յանուն եւ ի դիմաց Վարչութեան եղած այսպիսի յայտարարութիւն մ'անպատասխանի թողուլ՝ եւ տեսակ մը հաստատութիւն տալ անոր: Ազգ. Ժողովն այս խնդրոյն մէջ բնաւ երբէք Վարչութիւնն իւր ամբաստանեալ նկատած չէ, եւ խնդրոյն սկիզբէն ի վեր ամեն անգամ որ այսպիսի կարծիքներ յայտնուած են, Ժողովն հերքած է դանոնք, եւ փիլիսոփայութեան եպիսկոպոսի բողոքանաց չէ ընծայած բնաւ այնպիսի հանգամանք մը, որ Վարչութեան գէմ ամբաստանութեան բռնութիւն ունենայ: Միայն այս Ժողովը կրնայ Վարչութիւնն ամբաստանել, եւ Դիւանը չը կրնար վայրկեան մ'անդամ երեւակայել որ փիլիսոփայութեան եպիսկոպոսի խնդրոյն մէջ ամբաստանեալ լինի նա փիլիսոփայութեան եպիսկոպոս, ազգային պաշտօնեայ մը, Ազգային Ժողովին գիմնով բողոք բարձեր է Վարչութեան գէմ, որպէս թէ յանդիման պաշտօնանկ ըրած լինի զինքը, Ժողովն ազատ էր անոր բողոքը լսել կամ մերժել, հետեւապէս ուզեց տեղեկութիւն ստանալ թէ ինչ արժէք ունի այս բողոքը. հետզհետէ երկու նախաքննիչ զիւանաց յանձնեց խնդիրն ի նախաքննութիւն: Իսկ փիլիսոփայութեան եպիսկոպոս մի եւ նոյն միջոցին շարունակեց իւր բողոքներն թէ Ազգ. Ժողովոյ առջեւ եւ թէ լրագրաց միջոցաւ, այս բողոքներն անշուշտ գաղափարաց վրայ տարաբնութիւն մը յառաջ կը բերէին, ուստի Վարչութիւնն եւս յայտարարեց ինքնաբեր թէ պատրաստ է այս խնդրոյն նկատմամբ իւր բացատրութիւններն, իւր համարը, իւր պաշտօնը:

Նաեւ զբութիւնները ներկայացնելու, եւ պնդեց որ Ազգ. Ժողովը հաճի զինքը լսել, հետեւապէս Ժողովս հաւանեցաւ ունեկողութեան, բայց Վարչութեան ստիպման վրայ եւ ատանց իւր կողմէ համարատուութեան սլահանջում մ'ընելու անկէ:

Քանի մը նստարաններէ ընդմիջուածք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Կազմեմ որ համբերող լինիք եւ հաճիք ուշադրութիւն ընծայել իմ բացատրութեանցս, որպէս զի կարելի լինի հեշտիւ գտնել խնդրոյն ելքն:

Այժմ Ժողովոյ սեղանիս վրայ սա խնդրագիրը կը դանենք, որով բողոքարկուն յետս կը կոչէ իւր բողոքն ատանց որ եւ է պայմանի յանձնելով իւր խնդիրն Սրբազան Պատրիարք Նոր արդարասիրութեանը: Հարկ է գիտնալ որ Սրբազան Պատրիարքն եւ Վարչութիւնն իւր ուրոյն մարմիններ չեն նկատուիր, այլ երկուքը մի են, եւ տեղի չկայ գիտողութիւն ընելու երբ փիլիսոփայութեան եպիսկոպոս իւր խնդրագրին մէջ՝ Սրբազան Պատրիարք Նոր անուշը միայն կը յիշատակէ:

Անշուշտ երբ որ եւ է անհատ ատենախմբ մը գիմէ, եւ բողոք բառնայ ուրիշի մը գէմ, արդարութիւնը կը պահանջէ զինքը լսել եւ պատասխանել թէ իրաւունք ունի կամ ոչ: Այսպէս ըրած է Ազգ. Ժողովն ալ փիլիսոփայութեան եպիսկոպոսի խնդրոյն մէջ, որ Վարչութեան գէմ բողոքած էր, ուստի Ժողովն ուզած էր խնդիրը հասկնալ եւ չէ թէ Վարչութիւնն ամբաստանութեան ներքեւ նկատած էր, վասն զի այսպիսի որոշում մ'եթէ տեղի ունենար խիստ ցաւալի ազաւորութիւն մը յառաջ պիտի բերէր, եւ Վարչութեան գոյութիւնն ազգին մէջ անհնար գործէր: Մատթէոս սրբազան պահ մ'առաջ ըսաւ թէ Իրաւաստութեան զիւանի անդամներէն Օտեան Նշան էֆէնտին ալ համաձայնած է իւր անդամակցաց. Դիւանս դեռ հիմա ստացաւ Օտեան էֆէնտի կողմէ այս խնդրոյն վերայ Ժողովոյ ուղղեալ մասնաւոր տեղեկագիր մը, որմէ կը տեսնուի թէ Օտեան էֆէնտի

ոչ միայն համաձայնած է իւր անդամակցաց այս խնդրոյն մէջ, այլ քիչ մ'ալ առաջ դա-
ցած է . . .

ԶԱՅՆԵՐ. — Ո՛ւր է, ո՛ւր է տեղեկա-
գիրը:

(Ընդմիջմունք եւ շշուկք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Կա-
ղաչեմ որ հանդարտիք, վասն զի՝ չեմ կրնար
շարունակել խօսքս, երբ այսպէս ընդմիջու-
ներ տեղի ունենան: Ինչ որ ալ լինի այդ տե-
ղեկագրին պարունակութիւնը, խնդիրն անոր
վրայ չէ այժմ, այլ սա է թէ բողոքարկուն
սա խնդրագիրը մատուցանելով ժողովին յետս
կը կոչէ իւր բողոքն, եւ երբ ժողովն հաւա-
նի այս յետս կոչման, այլ եւս խնդիր չ'մնար,
որ Խաւառութեան դիւանի տեղեկագրերուն
դիմել հարկ ըլլայ: Ահաւասիկ անգամ մ'ալ
կը կարդամ ձեզ այդ յետս կոչման գիրը:

Եւ Ատենապետ էֆէնտին կընթեռնու զայն
եւ կը շարունակէ խօսքը:

Ահաւասիկ այս յետս կոչման վրայ է այ-
ժմ խնդիրը, պէտք է ուրեմն ձեր ուշադ-
րութիւնը նուիրէք ասոր եւ ձեր կարծիքն
հաճիք յայտնել թէ ինչ ընել պէտք է: Կը-
նաք, օրինակի համար, առաջարկել որ նախա-
քննութեան յանձնուի: Կրնաք պահանջել որ
մերժուի, կամ ընդունուի, սակայն պէտք չէ
կարծէք որ Վարչութիւնն ամբաստանութեան
ներքեւ ինկած է, փրկիպոս եպիսկոպոսի բո-
ղոքանաց առջեւ: Եւ դարձեալ եթէ ընդունիք
անոր յետս կոչումն եւ խնդիրն մեր օրակարգէն
ջնջէք, մի կարծէք թէ Վարչութեան սեղա-
նին վրայէն ալ վերցուած կը լինի Վերջապէս
ժողովը կրնայ այսպիսի բանաձեւով մը տալ
իւր որոշումն որ բոլոր եթադրութեանց ա-
ռաջքն առնուի:

Այս խնդիրը պարզապէս անձնական խն-
դիր մ'է, եւ հանրական կերպարան մը չու-
նի բնաւ: Ուստի պէտք է զայն իւր սահմա-
նին մէջ նկատել եւ մտածել թէ ինչ պէտք է

ընել երբ բողոքարկու մը յետս կը կոչէ իւր
բողոքը:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Պահ մ'առաջ
Գրիստոստուր Էֆէնտի ըսաւ թէ փրկիպոս ե-
պիսկոպոս տեսնելով որ իւր դատը պիտի կոր-
սընցնէ, քննութեան վախուստ տալ կուզէ այս
յետս կոչման գրովը: Այս կարծիքը սխալ
է զրիտովն, վասն զի տակաւին չկարդացուե-
ցան այս ժողովին մէջ Վարչութեան պաշտօ-
նական գրերն, չստեղծեցան անոր բացատրու-
թիւններն եւ գատաստան տեղի չունեցաւ որ
փրկիպոս եպիսկոպոս այդպիսի վախուստ մը
մտաբերէր:

ԶԱՅՆ ՄԸ. — (Ընդմիջելով) [Զէք թողուր
որ դրերը կարդացուին:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. (Շարունակելով)
Այդ ալ սխալ է: Տակաւին ոչ ոք գիտէ թէ
ինչ վիճակի մէջ է խնդիրն, եթէ օրինաւոր
քննութիւն եւ գատաստան լինի թերեւս պի-
տի գատապարտուի, եւ ես պիտի ըլլամ ա-
ռաջինն իւր գատապարտութեան համար քուէ
տուողը, թերեւս պիտի արդարանայ եւ այն
ատեն՝ անոնք որ այսօր զինքը կանխակալ կեր-
պով կը դատեն, անոր անմեղութեան քուէ
պիտի տան, ձեռքերնին իրենց խղճին վրայ
դնելով: Ուստի պէտք չէ աճապարենք, այլ
նախ քան զամենայն սա կէտը պարզենք թէ
առաջնորդի մը գատաստանը կրնանք տեսնել
հոս: Սահմանադրութիւնը կը պատասխանէ,
— ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Կը նե-
րէք ինձ գիտել տալ ձեզ, Ատենապետ էֆէն-
տի, որ այդ խօսքերը խնդրէն դուրս են:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խնդրեմ թոյլ տուեք
որ խօսի:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակե-
լով) Կը սխալիք, Ատենապետ էֆէնտի, նոյն
խակ խնդրոյն սահմանին մէջն եմ, մի ճշգ-
շտեմ:

դիս, եւ թոյլ տուէք որ շարունակեմ: Սահ-
մանադրութիւնը կը տրամադրէ որ առաջնոր-
դական խնդիրներ դաւառին մէջ տեսնուին:
Եւ ահաւասիկ փրկիպոս եպիսկոպոս՝ այս
սահմանադրական կանոնին վրայ յենելով, եւ
տեսնելով որ Սրբազան Պատրիարքը քննիչ
յուզարկած է ի Տիգրանակերտ, իւր խնդրոյն
քննութեանն համար, յետս էլ կոչէ իւր բո-
ղոքն, եւ այս յետս կոչումը չկրնար իրեւ
վախուստ նկատուիլ, քանի որ ժողովն դեռ
վճիռ մ'ալ արձակած չէ: Զարմանալի է որ
Վարչութիւնն երեւմն ըստ քմաց կը շարժի
այսպիսի խնդրոց մէջ: Երբ 1873 ին, դուք
Մատթէոս Սրբազան, Վարչութեան մէջ կը
դանուէիք, ինչ ըրիք Պրուսայի խնդիրն, որ
հոս եկած էր: Սահմանադրական տեսակէտով
ուղեցիք զայն լուծել, եւ դուք անձամբ իւ-
րեւ քննիչ հոն երթալով Գաւառական ժողով
կազմել տուիք, խնդիրն անոր որոշման են-
թարկեցիք եւ անոր վճռով լմնցուցիք: Արդ
ինչու՞ կը զլանաք այժմ Տիգրանակերտի ազ-
գայնոց միեւնոյն իրաւունքը:

(Ընդմիջմունք. Ատենապետը կատիւութի լռել)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դարձեալ խնդրէն կը
չեղիք, Ատենապետ էֆէնտի, եւ այնպիսի
մանրամասնութեանց եւ պատմութեանց կանց-
նիք, որոց վրայ խօսիլն աւելորդ է: Պէտք է
գիտնաք որ խնդիրը փրկիպոս եպիսկոպոսի
յանցապարտ կամ անմեղ ըլլալուն վրայ չէ,
եւ ոչ առաջնորդական դատեր վարելու եղա-
նակին վրայ: Բողոք մը կար փրկիպոս եպիս-
կոպոսի կողմէ եւ զայն յետս կը կոչէ այսօր,
ինչ է այս մասին ձեր կարծիքն, ընդունե՞լ
պէտք է թէ ոչ, զայն ըսէք միայն, եթէ ոչ
կը ցաւիմ որ չալիտի կարենամ թոյլ տալ որ
շարունակէք ձեր խօսքը:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կարծեմ
թէ բնաւ խնդրոյն սահմանէն չեղած չեմ, եւ
որովհետեւ շարունակ կընդմիջէք զիս, եւ թոյլ
չէք տար որ խօսիմ, որով իմ երեսփոխանա-
կան իրաւունքս կը բռնաբարուի, ուստի խօսք
չունիմ:

Եւ Ատենապետ էֆէնտին զայս ըսելով մեկ-
նեցաւ խորհրդարանէն:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մտքէս անցած ա-
մէն բան չալիտի ըսեմ, Հայրենասիրութիւնը
չատ անգամ լուծեան կը հարկադրէ զմեզ:
Ամէն անգամ որ խնդրոյ մը մէջ օրինաւորու-
թեան ընթացքէն կը շեղինք՝ այսպէս յուզու-
ներ կը պատահին եւ ժողովը ժամաւաճառ կըլ-
լայ: Այս խնդիրը քանի մը նիստերէ ի վեր ժո-
ղովին ուշադրութիւնը գրաւած է: Օրակարգին
մէջ ստիպողական խնդիր մը չունենալով՝ կըր-
ցանք ցարդ անով զբաղիլ, սակայն փրկիպոս
եպիսկոպոս այսքան զբաղում պատճառելէ ե-
տեւ, այսօր ալ կենէ խնդրագիր մը կուտայ,
եւ յետս կոչելով իւր բողոքը, նոր խնդիր մը կը
յարուցանէ: Իւր խնդրագիրն աղօտ իմաստ
մ'ունի, եւ թագուն նպատակ մը կայ այս յետս
կոչման ձեւին ներքեւ, սակայն Գաւառական
էֆէնտին ստանձնելով խնդիրն, կը փաստա-
բանէ ի նպատակ յետս կոչման, եւ այնպիսի
մեկնութիւններ կուտայ, որ սքօղեալ նպա-
տակն ի վեր կը հանեն, եւ զմեզ կը լուսաւորեն
այն մթութեան մէջ, ուրկէ կուզեն ժողովն
առաջնորդել զէպ իրենց նպատակին փրկիպոս
եպիսկոպոս կըսէ թէ Ս. Պատրիարքը քննիչ
դրկած է ի Տիգրանակերտ, եւ այս տնօրէնու-
թիւնն իւր իրաւանց իբր գոհացում համա-
րելով առ Ազգ. ժողովն մատուցած բողոքը
յետս կը կոչէ, իսկ Վարչութիւնը կը յայտա-
րարէ թէ հոն զրկուող եկեղեցականն՝ առաջ-
նորդական տեղապահի պաշտօնով գացած է եւ
ոչ թէ քննիչի, ըսել է թէ այս յետս կոչման
մէջ գաղտնի գիտում մը կայ:

Ես կառաջարկեմ իբր չեղեալ նկատել
զայն, ոչ միայն իւր անբաւականութեան
եւ ներքին գիտման համար, այլ այն
պատճառաւ միանգամայն որ Տիգրանակերտի
խնդիրն Երեսփոխանաց ոմանց կողմէ ստանձ-
նող զանուելուն համար՝ ժողովը զայն քանի
մ'անգամ նախաքննիչ դիւանաց զրկեց, եւ
վերջապէս Վարչութեան բացատրութիւններն
լսել որոշեց, մանաւանդ թէ երբ այսօր Վար-
չութիւնը կը յայտարարէ թէ փրկիպոս եպիս-
կոպոս յանցաւոր է, թէ Վարչութեան որո-

չուսեցրը չյարգեց, թէ պատուիրակաց չանսաց եւ թէ զանոնք դանակածել տուաւ, այս խնդիրը մեկուսի նետել անկարելի է: Միւս կողմէ մենք գիտենք որ փխրապոս եպիսկոպոս շարունակ լրագրաց մէջ կը կրկնէ թէ պատուիրակները հակադդալին քաղաքականութեան մը հետեւած են, թէ կաշառակեր են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Ի խնդիր, Ատենաբան էֆէնտի, այդ խօսքերն օտար են նիւթէն եւ չէք կրնար այսպէս շարունակել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Ես բուն խնդրոյն սահմանին մէջ եմ, պիտի խօսիմ եւ իրաւունք չունիմ զիս արդիւնելու: Փխրապոս եպիսկոպոս հասարակաց կարծիքը գայթակղեցնող յայտարարութիւններ Բրած է, պէտք է զանոնք ալ յետս կոչէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Ձեռք կրնար թող տալ որ այս կերպով շարունակէք ձեր խօսքը, ուստի կը կրկնեմ ի խնդիր դարձէք, Ատենաբան էֆէնտի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Կը բողոքեմ, իրաւունք չունիմ զիս խօսելէ արդիւնելու: Տիգրանակերտի մէջ ազգային շահեր կան կորսուած, պէտք է որ ասոնց վրայ խօսիմ, որպէս զի ժողովը լսէ եւ թափանցէ այս յետս կոչման նպատակին:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Ձեռք ընդունիր այդ խօսքերը, Ատենապետ էֆէնտի, լուցուցէք զինքը:

(Աղմուկ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրնաք բողոքել, փափաղեան էֆէնտի, բայց պարտաւոր էք քիչ մ'ալ ունկնդիր ըլլալ, եթէ ոչ պիտի հարկադրիմ ի կարգ հրաւիրել զձեզ: Պէտք է լաւ ուշադրութիւն ընէք թէ ինչ կէտի վրայ կը դառնայ խնդիրն: Բողոքարկու մը կայ, որ այսօր ելիր յետս կը կոչէ իւր բողոքն, այնպիսի պա-

րագայ մը է այս, զոր նախատեսած է մեր ներքին կանոնադրին, որպէս զի ժողովին ցոյց տայ իւր բռնելիք ընթացքն, ուստի ժողովը իրաւունք ունի, ինչպէս կ'ընեն ուրիշ խորհրդարանական ազգաց մէջ, ինք որոշելու թէ ինչ եղանակաւ պէտք է շարժիլ այս սրարագային մէջ, ուրիշն, Ատենաբան էֆէնտի, այս կէտին դարձիք, եւ եզրակացուցէք ձեր խօսքը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Երբ ատենաբանին բերնէն բառ մ'եկնէ, իսկոյն կ'ընդմիջէք, եւ թոյլ չէք տար որ կանոնադրապէս շարունակէ իւր խօսքը, եւ կը չփոթէք զինքը: Ահաւասիկ ես բացարձակապէս կ'ըսեմ թէ այս մարդը դատաւարութիւն հան արժանի է, քանի որ այսպիսի խաղեր կը խաղայ:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Բեւեալան բարբառի անվայել է այդ բառը, չենք ընդունիր:

ՇՆՈՒԿԵ ԵՎ ՇՖՈՒԹԻԼԵՆ. — Ատենապետ էֆէնտին ժողովին բարեկարգութիւնը կը հաստատէ եւ ատենաբանը կը հրաւիրէ առանց խնդրէն օտար մանրամասնութեանց մտնելու, ամիսօրեալ եւ եզրակացնել իւր խօսքն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Պէտք է խնայել ժողովին ժամերուն եւ այդ թուղթն իրեւ չեղեալ նկատելով նախաքննիչ զիւանի տեղեկագրին դառնալ, որու եզրակացութիւնն նոյն իսկ այդ բողոքին մերժումն է: Եթէ այդ անբաւական է, ըստ նախորդ որոշման պէտք է Վարչութեան բացատրութիւնները լսել որ եթէ Պրոպագանդիստ կ'անցնինք օրակարգին, եթէ ոչ՝ քննութիւն տեղի կ'ունենայ:

Տ. ՅՈՎՀ. ՔԱԶԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ. — Գիտէք արդէն որ ուղեւորութեան պատճառաւ շատ ժամանակէ ի վեր բացակայ էի Ազգ. ժողովոյ նիստերէն, ուստի անտեղեակ կը գտնուիմ նա-

խորդ եղեւութեանց եւ չգիտեմ թէ ի՞նչ անցքեր անցեր են յառաջագոյն Ազգ. վարչութեան եւ փխրապոս եպիսկոպոսի միջեւ: Ինչ որ այժմ կը տեղեկանամ եւ կը տեսնեմ սա է թէ՛ Վարչութիւնը փխրապոս եպիսկոպոսը Տիգրանակերտի վիճակին առաջնորդութեան պաշտօնէն դադարեցուցեր է, հետեւապէս փխրապոս եպիսկոպոս բողոք բարձեր է առ Ազգ. ժողովն Վարչութեան դէմ, զինքն պաշտօնանկ ընկելուն համար, եւ այսօր ելեր իւր բողոքը յետս կը կոչէ Սրբազան Պատրիարք Զօր արդարաւիրութեան յանձնելով խնդիրն եւ յայտարարելով թէ արդէն քննիչ զրկած է հոն նորին Սրբազնութիւնն: Իսկ ժողովին մէջ այս խնդրոյն պատճառաւ երկու ներհակ կուսակցութիւններ կազմուել են, որ զիրար կասկածօտ աչօք դիտելով կը բաղկին իրարու:

Անոնք որ փխրապոս եպիսկոպոսի յետս կոչման չ'են հաւանիր, գլխաւորաբար սա առարկութիւնը կ'ընեն թէ Վարչութիւնն ամբաստանութեան ներքեւ ինկած է, եւ թէ փխրապոս եպիսկոպոսի յետս կոչմամբ չ'վերջանար խնդիրը, մինչեւ որ արդարութիւնը չը յայտնուի: Սակայն Դիւանին յայտարարութիւններէն կը տեղեկանանք որ ժողովը բնաւ մտքէն անգամ չ'է անցուցած Վարչութիւնն ամբաստանեալ նկատել, այլ փխրապոս եպիսկոպոսի բողոքին արժէքը հասկնալ ուզեր է, եւ նոյն իսկ Վարչութեան առաջարկութեան վրայ՝ որոշեր է անոր բացատրութիւնները լըսել եւ պաշտօնական գրութիւնները տեսնել:

Արդ՝ ես այնպէս կ'ըմբռնեմ որ փխրապոս եպիսկոպոս այդ յետս կոչմամբ մէկ կողմէ իւր պաշտօնականութեանը համար բողոքելէ կը դադրի, եւ միւս կողմէ իւր առաջնորդութեան խնդիրն ալ Սրբազան Պատրիարք Զօր եւ Վարչութեան տնօրէնութեանը կը յանձնէ:

Ես այնպէս կը կարծեմ որ այս խնդիրը պէտք է ընթերցել, եւ այս կերպով վերջացնելու է զայն:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կուղեմ անձնական դէպի մը համար պատասխանել Քաթիամաճեան էֆէնտիին, որ Պրուսայի խնդիրն իբր օրինակ մէջ բերաւ:

Այն թուականին՝ յորում Պրուսայի խնդիրը կը յուղուէր եւ Վարչութեան մէջ՝ դանուցանք մենք, վիճակին առաջնորդ Բարթուղիմէոս եպիսկոպոս արդէն մեր նախորդին կողմէ պաշտօնանկ եղած եւ Պօլիս բերուած էր, անաստած լինելով անոր հրամանին: Սակայն Բարթուղիմէոս եպիսկոպոս յատենի Վարչութեան եկաւ մեղայ ըսաւ, ուստի Վարչութիւնն ալ ներեց իրեն, եւ երբ տեղւոյն գաւառական ժողովը կազմուելով զինքը տառաջնորդ ընտրեց վերստին, Վարչութիւնը վաւերեց այդ ընտրութիւնն եւ զինքը իւր վիճակը յուղարկեց: Եթէ փխրապոս եպիսկոպոս ալ մի եւ նոյն ընթացքը բռնէ Վարչութիւնն անուշտ աններող չ'լինիր անոր դէմ: Այսքան անձնական դէպին համար, դանք այժմ խնդրոյն Վարչութեան դէմ բողոքած էր փխրապոս եպիսկոպոս, իւր բողոքը արձագանք գըտաւ ժողովին մէջ, եւ այն նիստին՝ յորում Վարչութեան կողմէ ոչ ոք ներկայ գտնուած էր, Երեմիոփոսաններէն զիտող եղաւ թէ Վարչութիւնը խորհրդաւոր լուծութիւն մը կը պահէ այս խնդրոյն մէջ: Սակայն Վարչութիւնը չ'ուեց ցվերջ, ուզեց բացատրութիւն տալ, եւ իւր գրերը ներկայել, եւ ժողովն յայնժամ որոշեց զինքը լսել: Իրաւասութեան դիւանի անդամներէն մին՝ անոր կողմէ կատարուած նախաքննութեան մասնակից չ'գտնուելուն համար՝ հրաժարած էր, ժողովը մերժեց հրաժարականն, եւ տեղեկագրին վերադարձուց առ նոյն Դիւանն որպէս զի անոր հետ խորհրդակցելով բերէ անդեկագիրն, եւ ահաւասիկ նա ալ համաձայնեցաւ իւր ընկերակցաց, վերջապէս խնդիրը քննուելու եւ ճշմարտութիւնը յայտնուելու ժամը հասաւ եւ փխրապոս եպիսկոպոս իւր բողոքը յետս կոչելու պատրուակին ներքեւ խնդիրը առնուլ տանիլ կուղէ ժողովէն:

Սակայն Վարչութիւնն այդ անձին համար յայտարարեց թէ յանցաւարտ է, ինչպէս ուրեմն կը թողուք իւր օձիքն որ ելնէ երթայ: Ձեր Վարչութիւնը քանիցս յայտարարած է որ Տիգրանակերտի ժողովները լուծած է նա՝ ապօրինի կերպով, թէ պատուիրակները գտնուելու տուած է, թէ Պատրիարքարանի հրամա-

նայ հակառակ եկեղեցական մը քահանայա-
դործութենէ արդիւած է, եւ այս ամենը ընե-
լէ ետեւ՝ երբ կուգայ Վարչութեան գէտ կը բո-
ղոքէ, եւ այնքան ազմուկ կը յարուցանէ, կա-
րելի՞ է արդեօք թողուլ զինքը որ երթայ, բո-
ղոքս ետ առի ըսելով:

Ես դարձեալ կը յայտարարեմ թէ՛ Վար-
չութիւնը պէտք է լսել, դատաստան ընել,
եւ ազգին մէջ օրինակ մը տալ դատաստանի,
եւ Վարչութիւնը պատրաստ է ձեր քուէին
առջեւ խնամարհելու: Ուստի կառավարիկ մեր-
ժել այդ յետս կոչումն, եւ խնդրոյն դառնալ:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Եօք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք է անապարել,
խնդիրը քուէարկուելու համար պիտք է լաւ
լուսաբանուած լինի:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն ինչպէս գի-
տէք, Փիլիպպոս եպիսկոպոսի յետս կոչման
վրայ է եւ տակաւին չպարզուեցաւ ըստ բա-
ւականին որ կարելի լինի քուէարկել: Ի՞նչ
պէտք է ընել երբ մէկը կենէ կը բողոքէ, եւ
երբ տակաւին խնդիրը չպարզուած՝ եւ իւր ո-
րոշումն չ'ընդունած՝ բողոքը յետս կը կոչէ:
Ես ժողովին կարծեաց վրայ ազդեցութիւն բա-
նեցնել չեմ ուզեր, առկայն կը պնդեմ որ
պէտք է խնդրոյն օրինական կէտին ուշադրու-
թիւն ընծայել որ գիւրանայ լուծումը:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովին կամաց պիտի
զիմեմ այժմ թէ՛ կուզէ՞ վիճարանութիւնը փա-
կել թէ՛ ոչ: Բայց բացումը քուէի չդրած իբր
Ատենապետ իրաւունք ունի՞մ խնդրոյն վիճա-
կը բացատրել, վասն զի մթութեան մէջ կա-
րելի չէ լուծման հասկիլ, մանաւանդ որ տա-
կաւին շատ մ'երեսփոխաններ խօսք ուղած են,
կուզէ՞ք որ անապարհնք եւ առանց Երեսփո-

խանաց կարծիքն առնելու խնդիրը որոշելու
կրնենք:

ՔԱՆԻ ՄԼ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ: — Ոչ, ոչ, չենք
ուզեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ ժողովին բողոք
մը ներկայանայ, եւ ի վերջէ յետս կոչուի,
ի՞նչ պէտք է ընել: Այս սկզբան կէտը պէտք
է պարզել: Կարծիք մը կայ, որ Փափագեան է-
ֆէնտիինն է, եւ որու յարեցաւ Մատթէոս
Սրբազան, որ մերժում կառավարիկէ: Բայց ա-
սոր գէտ տակաւին ուրիշ կարծիք մը կամ հա-
կառաջարկ մը չկայ, ի՞նչպէս պիտի կարենանք
որոշում մը տալ խնդրոյն:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

Հետեւեալս Ատենապետ էֆէնտին վի-
ճարանութեան փակումը քուէի կը դնէ, եւ
ժողովն 8 քուէի ընդդէմ՝ 18 քուէով՝ ԿՈՐՈՇԷ
վիճարանութիւնը շարունակել:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կը
յայտարարեմ որ եթէ ժողովն առանց Վար-
չութիւնը լսելու վերջացնէ Փիլիպպոս եպիս-
կոպոսի խնդիրը, նոյն վարկեանէն դադրած
է Վարչութիւնը:

Այս յայտարարութիւնն ընելով Մատթէոս
եպիսկոպոս կը մեկնի ժողովն Երեսփոխա-
նաց ունեց հետ:

ԶԱՅՆԵՐ. — Չենք ընդունիր այդ խօսքը:

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Կապառնան:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Կը բողոքենք այդ
անպառնալիքին դէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հանդարտեցէ՛ք, կաղա-
չեմ, որպէս զի կարելի լինի վիճարանութիւնը
կանոնաւոր կերպով շարունակել, եւ խնդրոյն
լուծմանը հասնիլ:

ԷՆՔՍԻՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Տակաւին Փի-
լիպպոս եպիսկոպոսի դատը տեսնուած եւ
քննութիւն կատարուած չէ, իսկ Փափագեան
էֆէնտի վճիռ կարձակէ, իւր Մատթէոս Սրբ-
բազան յանցաւոր է կըսէ՝ անոր համար: Ա-
ռանց դատաստանի վճիռ չտրուիր, թող անց-
նին ատենադրութեան մէջ Վարչութեան յի-
շած 72 կտոր դրութիւնները, քննուի խնդիրը,
տեսնենք իրաւունք ունին այսպէս ըսելու:

ՊԱՐՈՆԵԱՆ Ա. ԷՖ. — Կարծեմ թէ բողո-
քարկու մ'իրաւունք կրնայ ունենալ իւր բո-
ղոքը յետս կոչելու, եւ ասոր դէմ բան չըս-
ուիր, առկայն երբ իւր բողոքը ուրիշի մը
պատուոյն դադրէ, այն ատեն անոր կը պատկա-
նի բողոք բառնալ, որով նորէն խնդիրը ձեռք
կառնուի:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Խնդիրը Գիւանին
տուած բացատրութիւններովն այն աստիճան
պարզեցաւ որ այլ եւս հարկ չկայ իմաստասի-
րութիւն ընելու, ուստի մի միայն եզրակացու-
թիւնը պիտի ունենամ:

Փիլիպպոս եպիսկոպոս նախապէս բողոք
մ'ըրած էր առ Ազգ. ժողովն, այժմ զայն ետ
կառնու, բայց բողոքը կը պահէ, միայն թէ
փոխանակ զայն այս ժողովին մէջ լուծել տա-
լու՝ տարբեր մարմնոյ մը յանձնել կուզէ, ու-
րեմն ատենանք կը վախէ եւ ոչ թէ բողոքն իս-
պառ կը ջնջէ:

Թէ իրաց այս վիճակին մէջ մեղի համար
ի՞նչ պէտք է ընել, իմ կարծիքս այն է թէ
քանի սր խնդիրը Փիլիպպոս եպիսկոպոսի բո-
ղոքադրով ժողովիս մէջ մուտ դառած է, եւ
երբ նա ետ կառնու զայն, ժողովոյ համար լու-
ծելի խնդիր չմնար, բայց նա ուրիշ ատենի
մը կը դիմէ եղեր, թող այն ատենանք խորհի
թէ կրնայ այս խնդիրը քննել եւ լուծել, եւ
եթէ այդ ատենանք խնդիրը բռնէ, այն ատեն
ժողովս ալ կը խորհի թէ ի՞նչ պիտի ընէ:

Սակայն եթէ գիտուի թէ խնդիրն այս առ-
տիճան յուղուելէ եւ մտքերը դայթակեցնելէ
ետեւ՝ կարելի չէ անով զբաղիլ, եւ կը համա-
ձայնիմ. Ազգ. ժողովը կրնայ խնդրոյն շարու-
նակութիւն տալ, բայց ոչ թէ Փիլիպպոս-

եպիսկոպոսի դատախազութեան առթիւ,
վասն զի անոր բողոքադրին յետս կոչմամբը
դատախազութիւն եւ դատ ինքնին կանհետա-
նայ, այլ նոյն իսկ իրեն յատուկ համարառու-
թեան եւ հարցապնդման իրաւամբը:

ՄԵԼԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Գիւանէն
յետս կոչման գիրն առնելով) Ես շատ ուշ
հասայ ժողովն, ուստի չեմ կրնար ամբողջ
գիտնալ թէ ի՞նչ խօսուած է ցարդ խնդրոյն
վրայ եւ ի՞նչ տեսութեամբ նկատուած է այն,
բայց ստացած տեղեկութիւններէս սա չափ
միայն հասկըցայ որ Փիլիպպոս եպիսկոպոս
գիր մը մատուցեր է ժողովիս, որով յետս կը
կոչէ իւր յարուցած խնդիրն, որ արդէն քա-
նի մը նիստերը գրաւեց ժողովին, առանց ի-
րական կարեւորութեան: Այդ յետս կոչումն
ոմանք բաւական նկատեր եւ խնդիրը փակե-
լու վերջացնելու եւ ընդո նելու տրամադիր
գտնուեր են, իսկ միւս Երեսփոխանները,
կարծեմ աւելի բազմաթիւ, զայն մերժելու
կարծիքն ունեցեր են եւ սնդեր են անոր
վրայ:

Երբ սա յետս կոչման գրոյն վրայ ակնարկ
մը կը նետեմ, ի միջն թողուած այնպիսի կէ-
տեր կը նշմարեմ անոր մէջ, որ յայտնուած
ամեն հակառակ կարծեաց համար ալ արդա-
բացուցիչ պատճառներ կը մատակարարեն: Օ-
րինակի համար՝ Փիլիպպոս եպիսկոպոս կը-
սէ թէ՛ բողոքս յետս կը կոչեմ, վասն զի Տիգ-
րանակերտի խնդրոյն օրինաւոր լուծման հա-
մար յատկապէս քննիչ զրկած է Ս. Պատ-
րիարքն ինոյն գաւառն: Ի՞նչ պէտք է հաս-
կընալ ասկէ. Փիլիպպոս եպիսկոպոս բողոքած
էր Ազգ. Վարչութեան դէմ զինքը պաշտօնանկ
ընելուն համար եւ դատաստան ու հատու-
ցում պահանջած էր, արդեօք ըսել կուզէ
թէ, ես որչափ որ ուզեցի Վարչութեան դէմ
դատ բանալ, այժմ համոզուեցայ որ իմ դատս
անհիմն էր, վասն զի Վարչութիւնն իրաւա-
սութիւն ունէր Ազգ. շահուց պաշտպանու-
թեան համար հարկ տեսած ատեն պաշտօնանկ
ընել որ եւ է Ազգ. պաշտօնեայ, ուստի կը
հրաժարիմ այլ եւս իմ բացած դատէս: Եթէ
այս էր իւր միտքը, պէտք էր զայն քիչ մ'ա-

the first of the year, the weather was very cold, and the wind was very strong, so that the people were very much distressed. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather.

The first of the year, the weather was very cold, and the wind was very strong, so that the people were very much distressed. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather.

the first of the year, the weather was very cold, and the wind was very strong, so that the people were very much distressed. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather.

The first of the year, the weather was very cold, and the wind was very strong, so that the people were very much distressed. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather.

The first of the year, the weather was very cold, and the wind was very strong, so that the people were very much distressed. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather. The people of the country were very poor, and they were very much distressed by the weather.

ԱՋԴԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպս.	Խորվան	Ա. Արեւադէր
2	Տ. Խորէն	Ս. »	Նար-պէ	
3	Տ. Կարապետ	Ս. Եսայ.	Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. »	Իզմիրլեան	Բ. Արեւադէր
5	Տ. Ամբրոսիոս	Ծ. Վրդ.	Ռուբինեան	
6	Տ. Գարեգին	Ծ. »	Թաթարեան	
7	Տ. Ներսէս	Ծ. »	Ասլանեան	
8	Տ. Պօղոս	Ծ. »	Խօլտամեան	
9	Տ. Արիստակէս	Աւագ Գհն.	Մամբրէեան	
10	Տ. Խորէն	»	Փէհլիվանեան	Բ. Արեւ-Դրդէ
11	Տ. Սահակ	»	Տ. Սարգիսեան	Ա. Արեւ-Դրդէ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել Էփէնտի	Ալթուն Տիւրբի	Ա. Արեւ-Դրդէ
2	Գէորգ	»	Գլլըճեան
3	Գաբրիէլ	»	Եսաեան
4	Լօղօֆէթ	»	Պալեօղեան
5	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան
6	Մկրտիչ	»	Ֆրէնկեան
7	Յակոբ	»	Ջօպանեան
8	Սահակ	»	Ղազարոսեան
9	Ստեփան	»	Պէլիկճեան
10	Խաչատուր Խան	Տ. Նէրսիսեան	Բ. Արեւադէր

ՊԱՐՈՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՐԵՐՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Խնդիր վաւերացման ժն: Նխան առնադրութեան
2. Բաղակալութիւնը երեսօթանոց
3. Խնդրագիր Թիւրքմենական և Կողմ Լիւնտին
4. Ռաֆայէլեան Սիւն Լիւնտին առաջարկութիւնը

Օ ԱԿԱՐԴ

Ա. Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Տ. Փլիպպոս եւսկոպոսի:

Իրաւասութեան զիւանի անդամ Օսման Նշան Լիւնտին տեղեկագրէր:

Գլ. 2 պրոշ

ՄԵՓՈԼԻՏԻՏԻՆ ԱՅԴՐՈՂԱԾՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԴՆԵՐ յՈՂՈՎՈՅ ԵԱՌՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Եղ ծախուի ի Դիւսնաւան Չառչիարքարանի եւ Ղալարիոյ Ս. Լուսաւորիք
Եկեղեցւոյ բանկալը եւ Հայ գրաւաճառաց բով